

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

Ա.

Մամիկոնեանց նշանակութիւնը եւ պատմութեան
աղբիւրները.

Հայաստանի աւատական իշխանութիւններից՝ նախարարութիւններից, որոնց թիւը ըստ Մեսրոպ Երէցի չորս հարիւր¹ էր, իսկ ըստ Փաւստոս Բուզանդացու 900-ից² էլ

1 «Բարձա չորեքհարիւր» (Սոփերք 2, և. 32, 39. Վենետիկ 1853): Երևի այս թիւը հիմնուած է Ագաթանգեղոսի այն վկայութեան վրայ, որ Լուսաւորչի մասին ասում է «Բազմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս իշխանութեան իւրոյ... աւելի քան զչորեքհարիւր եպիսկոպոսս» (Ագաթ. ՃԻԳ, էջ 492, Թիֆլիս 1882): Աւստանէսը, որ նոյնը համարեա բառացի կըրկնում է (Ա. կթ, 99), անուն անուն յիշում է երեսուն «թոռակալ» նախարարութեանց և կամ գաւառների անունով (Ա, հ, 100): Ստ. Օրբէլեանն առնելով Ագաթանգեղոսից, Ս. Երէցից և Ղևոնդից (?), ասում է նմանապէս «Բարձա չորս հարիւր իշխանաց» (Ստեփաննոս Օրբէլեան է, 63—64, Պարիզ 1889): Ղևոնդ Գլակը գաւառների թիւը հասցնում է վեց հարիւր քսանի. «Ամենայն գաւառացս եպիսկոպոս պիտոյ են... բայց զի՛նչ են այսորիկ առ վեց հարիւր եւ քսան գաւառս Հայոց» (Պատմ. Տարօնոյ էջ 12—13. Վենետիկ 1889): Վարդան Բարձրաբերդցին Ս. Գրիգորին նուիրած ճառում անշուշտ Ղևոնդից առնելով՝ ասում է «Վիճակեցան նմա վեց հարիւր և քսան գաւառք» (Սոփերք Հայկ. Ե, էջ 51): Պետրոս Գետադարձի Ժամանակ ԺԱ. դարում կար ճինգ կամ եօթ հարիւր գաւառս ի հարկէ և և է գրեւը չիսթելուց է յառաջացեյ այս թիւը. «Եպիսկոպոսս հինգ հարիւր փառաւոր և գաւառապետս (ԱՊ գաւառանիստ տեսուչս. ԳԵՏՊ գաւառատեսուչս) ի վերայ եօթն (ԱԳՏՊ հինգ) հարիւր թեմի հանապազ» (Մատթէոս Առհայեցի էջ 154. Վաղարշապատ 1898):

2 «Թող զնահապետս մեծամեծս և զտանուտարս՝ որք գոր-

անցնում էր. առաջին տեղն են բռնում չորս նախարարական տուն՝ Բագրատունիք, Սիւնիք, Արծրունիք և Մամիկոնեանք։ Հայոց պատմութիւնը իսկապէս այս ցեղերի պատմութիւնն է։ Ամբողջ Հայոց ազգային պատմութիւն գրող Մ. Խորենացին և Սեբէոսը գերակշռութիւն են տալիս Բագրատունիներին։ Բագրատունեաց պատմագիր են Յովհաննէս կաթողիկոս, Ասողիկ (և կորած Շապուհ Բագրատունի), Արծրունեացը Թովմայ Արծրունի, Սիւնեացն Ստեփաննոս Օրբելեան (և կորած Պետրոս Սիւնեցի), իսկ Մամիկոնեանցը Փաւստոս Բուղանդ, Ղազար Փարպեցի, Եղիշէ, Յովհան Մամիկոնեան և Մեսրոպ Երէց։

Այս չորս տոհմերից էլ Բագրատունեաց և Մամիկոնեանց նշանակութիւնը և խաղացած դերը մեր պատմութեան ընթացքում աւելի նշանաւոր է։ Մամիկոնեանք իբրև Հայոց սպարապետներ համարեա թէ այն են, ինչ որ majordomus ները ֆրանկների թագաւորութեան մէջ, մանաւանդ Պ. դարում։ Ե. և Զ. դարերում նորա շարունակում են իբրև սպարապետներ Հայոց կեանքի ղեկավար հանդիսանալ և հասնում են մարզպանութեան, պատրկութեան և կիւրապազատութեան։ Մեր պատմութեան արարական շրջանում է—Թ դարը հետզհետէ տեղի են տալիս Բագրատունիներին. ԺԱ. և ԺԲ դարում կենտրոնանում են Սասունում և այնուհետև անյայտանում պատմութեան էջերից։

Արդարև մեծ էր այս տոհմի արժանիքն ու նշանակութիւնը դարերի ընթացքում մեր քաղաքական կեանքին ցոյց տուած մասնակցութեամբ։ Զորրորդ դարում Արշակ Բ. դահ բարձրանալով, իւր առաջին գործն է համարում իւր նախորդ Տիրանի խօլութեան՝ ժամանակ Հայոց պետական, զինուորական գործերից քաշուած հե-

ծակալք միայն էին, ինն հարիւր բարձ. . . թող զտանկայս գործակալութեանն սպասու» (Փաւստոս Բուղանդացի Պ, Բ, 68):

1 Փ. Բուղ. Պ, Բ, 67. «խոլութեանն—խսոլութեանն». Տես մեր «Պատմագիրք Հայոց» յօդուածն «Արարատ» 1903. Փետր.—Մարտ 248»:

ուացած Մամիկոնեաններին իւրեանց պաշտօնին՝ սպարապետութեան վերակոչել, նախ նոցա մեծին Մամիկոնեանց նահապետ կացուցանելով: «Եւ նորոգեցաւ, յարում է Բուզանդը հրճուանքով, զուլթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, և գործակալքն յիւրաքանչիւր շափու: Եւ սկիզբն գործակալութեան հազարապետութեան ... ազգն Գնունեաց հազարապետն ամենայն երկրին: Նոյնպէս ստրատելատութեան սպարապետութեանն զօրավարութեանն մարտի կռուելոյ, գործոյ ռազմիկ ճակատամուղ նիզակին, իրափառն, աղանազգիք, աղանադրօջք արծուենչանք, վարժնականիչք, աներկիւղք, քաջասիրտքն նահատակք, քաջանունք, բարենչանս, բարեհամբաւք, բարեգործք, յաջողակք ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեացն կարկաց ի Մամիկոնեան ազգին, ի վերայ ի շխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զօրաց զօրավարութեանն Հայոց մեծաց, հանապազ յամենայն ժամ՝ յաղթող ազգին պարգևեալ յերկնից բարիանուն, իրաքաջ, ի մեծինահապետութեան պատերազմի»¹: Ահա Մամիկոնեան դիւցազնական ցեղի իսկական նկարագիրը. սակայն շարունակենք: Ղաղար Փարպեցին պատմում է 450-ին, երբ Վարդան սպարապետը ճանապարհ է ընկնում Յունաց իշխանութեան կողմերը գնալու, Վասակ մարզպանը, Հայոց բոլոր տանուտէրները, սեպուհները և եպիսկոպոսները զարհուրեցան և տտում են. «Արդ գիտենք, որ իսպառ կորանք ... որովհետև ամենքը տեղեկացան և իմացան՝ թէ առանց այն ազգի, այն է Մամիկոնեանց առաջնորդութեան

1 Փ. Բուզ. Գ, ք, 67—68: Մ. Երէցը պարզաբանում և լրացնում է այս նկարագիրը «Եւ կացին զօրավարք Մամիկոնք ճակատամուխք ալեյնամիկ, արծուանչանք, նիզակափայլք, տաստրախալք, քաջասիրտք, աներկիւղք ի պատերազմունս, աջողակք ի մարտս պատերազմաց, բարեհամբաւք, բարենչանք, աղեղնադրօջք. ի մարտս պատերազմաց՝ իբրև հուր ընդ եղեգն ընթանային տիրասէր ազգն Մամիկոնեանից. իբրև կարգեցան զօրավարք Մամիկոնք: Սոփիւրք Հայկականք Զ. ք. 17—18, Վենետիկ 1853:

Հայոց աշխարհի ոչ մի բանն ու գործը գլուխ չէր եկել»¹։
Եւ ետեւից հասնելով Բագրևանդայ Արամանայ գիւղը, ա-
սում են Վարդանին, թէ դու ընտանիքով հոգս ես տանում
պրծնելու, բայց մենք ամենքս կորչում ենք, «Վասն զի մենք,
ոչ էլ մեր զաւակներն առանց ձեզ փրկութեան պատա-
հելու և ապրելու հնար չունինք»²։ Վարդանը պատաս-
խանում է թէ ինչպէս Մամիկոնեանք, միշտ աւելի բարի
ընկերի քանց իրենց անձի վրայ են հոգացել և իրենց
կեանքը դրել, այս ամենը դուք հայերդ ստոյգ գիտէք
«Ի պատմութենէ զրոյց և ի լսելոյ ձեր յաւագաց»³։

Ոչ միայն Հայերն ունէին այս համոզումը Մամիկո-
նեանց մասին, այլև Վրացիք և Աղուանները, գոնեա սոցա
նախարարներն էլ Հայոց նախարարների հետ 450 թուին
Պարսկաստանում մտածելով առերես Յազկերտ Բ. կամքը
կատարել և իրենց հաւատն ուրանալ, չէին համարձակում
Վարդանին յայտնել իրենց այդ մտադրութիւնը։ Սակայն
գիտէին, ասում է Փարպեցին, որ այս խորհուրդն ու
գործը կը լինի թերակատար եւ ոչ լիապէս... Վասնզի ամեն-
քը տեսել էին և լիով իզրոյց ճանաչում էին, թէ ամենայն
մի այնպիսի բան ու գործ իբնէ յոլով Մամիկոնեանց
ազգով և նոցա միաբանութեամբ էին գլուխ եկել»⁴։

Մամիկոնեանց այդ պատմութեան գիրքն անշուշտ
Փաւստոս Բուզանդն է, որ նկարագրում է մեզ Մամիկոնեան
քաջագուն Վաչէ, Վասակ, Մուշեղ և Մանուէլ զօրավար-
ների և այլ Մամիկոնեանց սխրագործութիւններն այնպէս,
կարծես թէ մի ժողովրդական դիւցազներգութիւն ես
կարդում. մանաւանդ թէ վերոյիշեալ մակերիւնները, որ սա
տալիս է Մամիկոնեանց, ընդհանրապէս կրում են ժողովրդա-
կան պատմութեան դրոշմը։— Մեր պատմահայր Մովսէս
Խորենացին հակասում է Բուզանդին, բայց նա ազաւա-
ղում է, և կամ լռութեան տալիս Մամիկոնեանց գործե-

1 Ղազար Փարպեցի. Բ, 1, 58. Հրատարակութիւն Ս. Էջմիածնի,
Տփլիս 1904:

2 Անդ, Բ, 1, 58. 3 Անդ Բ, 1, 59. 4 Անդ, Բ, 1, 50:

րը, սակայն անկասկած է, որ մեր ձերուներն կամայ թէ ակամայ սխալուով է—Մեսրոպ Երէցը համարեա Փ. Բուզանդի համառօտութիւնն է առաւել ևս ժողովրդական գունաւորութեամբ քան Բուզանդը, օգտուել է Մ. Խորենացուց¹. յատկապէս ժամանակագրական տեղեկութիւնները, որ եթէ Խորենացուց չեն, ապա ուրեմն երկուսն էլ միեւնոյն աղբիւրից են: Սակայն ունի աւելի մանր մունր դէպքեր քանց Փ. Բուզանդը, այլև գահնամակը, որ անշուշտ տարբեր աղբիւրից է: Ինքը պատմագիրը այդ կոչուով է Հայոց մնացորդաց Արեւելից գիրք կամ Արեւելից գիրք Հայոց մնացորդաց պատմութեանց².

Կրօնական պատերազմների երկու դիւցազները Վարդան և Վահան յաւիտեան անմահ կը մնան Հայոց պատմութեան և եկեղեցու նախատակների թուում շնորհիւ ոսկեծղի Եղիշէի և Ղ. Փարպեցու պատմագրութեանց: Սոցանից առաջինը աւելի բանաստեղծական խանդով և ոգևորութեամբ՝ կարծես թէ վիպասանութիւն է գրում, իսկ երկրորդը հանգամանօրէն և պատմագրի լրջութեամբ: Վարդան Բ. և Մուշեղ բոլորովին յար և նման են իրենց անուանակիցներին և նախորդներին, ինչպէս այդ երեւում է ստուգապատու՝ Սերէոսի պատմագրութիւնից:

Գուցէ այս միեւնոյն Մուշեղներն ու Վահանն են, որոնք նիւթ են դարձել Յովհան Մամիկոնեանի առասպելախառն պատմագրութեան, որ առաւել ժողովրդական զրոյցի

1 Սոփիքը Հայկականք Զ. Պատմութիւն Ս. Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի Վենետիկ 1853: Ա պրակի, բացի Լուսաւորչի աջի պատմութիւնից, ամենամեծ մասը Խորենացուց է. շատ սողեր ամբողջապէս բանացի են, և ոչ թէ Ագաթանգեղոսից, կամ Բուզանդից, ինչպէս մատնանիչ է անում Էմինը Ֆրանսերէն թարգմանութեան մէջ V. Langlois II, էջ 21—24: Հենց Ա. պրակն սկսում է բառացի Խորենացու Բ. դա. գլխի խօսքերով:

2 «Ի ՆժՁ [=967] թուականիս Հայոց, ... ես Մեսրոպ ... ծաղկաբաղ արարի զգիրքս զայս ի Հայոց մնացորդաց յԱրևելից գրոց ...: Եւ արդ զայս հանեալ յԱրևելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց ...» Սոփիքը Զ. էջ 138—136:

քան պատմութեան է նմանում: Ժամանակակից հմուտ Սերէոսը չգիտէ Տարօնում կատարուած Գայլ Վահանի, Ամբատի և Տիրանի այդ քաջագործութիւնները:

Համազասպ և Գրիգոր կիրապաղատները է դարի վերջերում վարում են Հայաստանի զեկը, ինչպէս տեսնում ենք Սերէոսի և Ղեւոնդի պատմագրութիւնից:

Ութերորդ դարում տակաւին փայլում են Մամիկոնեանց շառաւիղները Գրիգոր և Մուշեղ, բայց Մամիկոնեանք հետզհետէ նուազելով տեղի են տալիս խորագէտ Բագրատունիներին, որոնք արդէն վեցերորդ դարու վերջերից սկսել էին մրցել Մամիկոնեանց հետ, մինչև որ 887-ին առանձին թագաւորութիւն հաստատեցին:

Սակայն ԺԱ. և ԺԲ դարում Սասունում հանդէս են գալիս Մամիկոնեանց վերջին շառաւիղները Թոռնիկ և Վեզէն, ինչպէս նկարագրում են Մատթէոս Ուռնայեցին և Վարդան պատմագիրը:

Հատուկտոր տեղեկութիւններ Մամիկոնեանց մասին ունին մեր համարեա բոլոր պատմիչները, այլև արձանագրութիւնները¹, Գիրք Թղթոցը, հայերէն ձեռագրերի ցուցակները, Տաշեան և այլք. հայերէն ձեռագրերի անտիպ

1 Զալարեանց Սարգիս վ. ձանապարհորդութիւն մասն Ա. 1842 Տփլիս. էջ 108—117. Արձանագրութիւն Սուրբ Գրիգորայ, որ իՄեսեզ Այստեղ Մամիկոնեանց շառաւիղները երևում են ԺԳ. դարում: Ուրիշ արձանագրութեանց մէջ ևս յիշատակութիւններ կան: Թէ պատմագրերից թէ արձանագրութիւններից և թէ յիշատակագրութիւններից ապացուցում է Մամիկոնեանց գոյութիւնը մինչև ԺԳ. դարը. ուստի սխալում է Վարդան վարդապետը, որ Գրիգոր Մամիկոնեանի մահը Քուզայի ժամանակ պատմելով՝ ասում է. «Եւ յայսմհետէ բարձաւ ի Հոյոց յաշխարհէս տգգն Մամիկոնէից»: (Հաւաքումն Պատմութեան խո, 81. Վենետիկ 1862.)

2 Գարեգին Մուսնիսեանցն ունի Թորոս Ազարար 308—318. Կ. Պոլիս 1884 «Սասունցի» կոչուած աւետարաններից Ակնայ երկաթագիր աւետարանի ընդարձակ յիշատակարանը Սասունի տէր «Վիզենոյ մեծի Պատուելիսիմոսի որդւոյ Զորդուանէլի թոռն Թոռնկայ մեծի հօգրի և քաջի» մասին: Յ. Կ. ձանկրեան. Հնութիւնք Ակնայ. 76—77 ունի նոյն յիշատակարանի սկիզբը ի տէրութեանս Սանսոյ:

և տպագրուած յիշատակարանները² և ժողովրդական
աւանդութիւնները¹։

Այս բոլորից յետոյ հասկանալի պիտի լինի, թէ Մամիկոնեանք, որոնք Դ—է դարը նիւթ են դարձել ժողովրդական երգերի, զրոյցների և առասպելների, իրենք և իրենց երկիրը, Տարօնը մանաւանդ թէ Սասունը դարձրել են գլխաւոր առարկայ և ասպարէզ մեր ժողովրդական դիւցազներգութեան՝ Սասունցի Դաւիթ և Մհերին։

Սասունցի աւետարանի յիշատակարանում յիշատակուած Վիգենը կամ Վեգենը Սասունցի Դաւիթ ժողովրդական վէպի Յոան Վեգոն² է։ Թեպէտև յիշատակարանը դիւցազներգութեան նախատական մականունան հակառակ մեծամեծ գովեստներ է շնայլում Վիգենին, բայց Վարդան պատմագիրը հաստատում է պատմելով թէ Պարսից զօրավար Ելտիուզը⁵ վաթսուն տարի տիրեց Սասու-

Վեգենայ մեծի Պոստաւնուլիսիմուսի...»: Ալիբանն ունի Չորդուանէլ Մամիկոնեանի մասին մի հետաքրքրական յիշատակարան (Հայագատում, էջ 396—397. հատուած 244. Վենետիկ 1901)։

1 «Նոր-Իար» լրագիր 1887. Թ. 136, էջ 2—3 «Մի աւանդութիւն» վերնագրով յօդուած Դսեղից անտորագիրը Մեզ յայտնի է, որ մեր վիպերգակ Յովհաննէս Թումանեանինն է։

2 Վեգոյ ձեռ գործ է ածուած միայն Գարեգին Սարկաւազի Սասնայ Ծռեր և Սասունցի Դաւիթ հրատարակութեան մէջ. Թիֆլիս 1892:—Վէգի՝ Գարեգին Սրուանձաեանի հրատարակածի մէջ Ք. Պատկանեանի Материалы Армянскихъ Народнй. Мунскій Діалектъ СП. 1875, էջ 7, 9 հն:—Վեգո՝ ունի Մ. Արեղեան Դաւիթ և Մհեր, Շուշի 1889 էջ 11—12 հն. և Գար. Սարկ. 80:—Վերգեոյ՝ Բ. Խալաթեան, Սասնայ Փահլուաններ կամ Թլօր-Դաւիթ և Մհեր, Վաղարշապատ 1889, էջ 1, 44 հն:—Վարդան պատմիչն ունի Վիգեն, ՀԲ, 124. Վենետիկ 1862: Վեգէն անունը երևում է տարածուած է եղել և Տարօնի չրջակայքում. Արճէշում յիշուած է այդ անունը 1395-թուին, ինչպէս երևում է Թովմա Մեծորեցուց. Պատմութիւն, էջ 113. Պարիզ 1860: Ուրեմն պէտք է հետեցնել, որ այս ձևն աւելի տարածուած և ժողովրդական է, ինչպէս Գար. Սարկաւազի հրատարակութեան և Սասունցի աւետարանի մէջ էլ կայ։

3 Շեմա-ագ-դին Իլդիդիլ 1136—1172. Ստէնլի Լէն-Պալ Мусульманскія Династіи. В. Бартольдъ, СП. 1899 էջ 144:

նին¹։ Կտրիճ Սասունցին այլ մակդիր չէր կարող տալ Վիգենին, որին աննկուն Մամիկոնեանց անարժան շառաւիղ է համարել։

Մամիկոնեան է անշուշտ Մշոյ Մուշեղ² թագաւորը, որ անունով գիւցազներ Դ—Ը դարը շատ կան մեր պատմութեան մէջ. ափսոս որ վէպի մէջ Մուշեղի անունն է միայն յիշուում, բայց ոչ գործերը, որոնցով կարելի լինէր որոշել, թէ որ Մուշեղն է։

Սասունցի Դաւիթն ինքը Սմբատ Մամիկոնեանի որդի Դաւիթն է, Աշոտ պատրիկի (743—757) ախոյեանը, որ իւր Գրիգոր եղբօր հետ Եման³ գերի է տարւում, ապա ազատուում է և ասպատակում՝ Վասպուրական⁴։ Սակայն ժողովրդական վէպը, որ ժամանակագրութիւն չզիտէ, իւր յատուկ ձևով ու եղանակով զուգորդել և միացրել է ուրիշ Դաւիթներին⁵, այլ և Դաւիթ Կիւրապա-

1 Հաւար. Պատմ. ՀԲ, 124. Վեհետիկ 1862։

2 Գար. Սարկ. էջ 15։

3 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Ս. Պ. 1887. ԻՍ, 112—113։

4 Ղևոնդ ԻՅ, 118—119։

5 Յովհաննէս կաթողիկոսը պատմում է (Յովհաննու կաթողիկոսի Գրասխանակերտացոյ Պատմութիւն Հայոց Մոսկւա 1853, էջ 61—62), թէ Եզիտ, երևի Երկրորդը, Հայաստան գալով մի ոստիկան, ըստ Ղևոնդի Մահմէտ (է. 119—122) անունով, սերարկում է Բագրեանդ, և Բագուան գիւղի Ս. Գրիգորի վանքի միաբաններին, «Աւելի քան քառասուն այր» սպանել տալիս. մի հանգամանք, որ ժողովրդական վէպն այնքան չեչտում է (Մ. Արևիկան 61. Գար. Սարկ. 33, 100—103. տես և միւս հրատարակութիւնները)։ Ըստ Չամչեանի՝ երևի ճառընտրից առնելով այս Եզիտի ժամանակ ապրում էր մի Դաւիթ Մամիկոնեան։ Չամչեանը սորան և Սմբատի որդի ու Գրիգորի եղբայր Դաւիթն նոյն անձն է համարում։ Այն ինչ Սմբատի որդի Դաւիթ Մամիկոնեանն սպանուել է ըստ Ղևոնդի (ԻՅ, 120—121) Մրուան Բ. Օմայեանի հրամանով, ուրեմն 740—750 թուականին։ Մինչդեռ այս Դաւիթը ըստ Չամչեանի ճառընտրի տակաւին կենդանի էր 785/86 թուին, երբ Գուրնում և ոչ թէ Պարտաւում, ինչպէս ասում է Չամչեանը, Համազասպ և Սահակ Արծրունիները նահատակուեցան (Ղևոնդ ԻԾ, 165, ՄԼԳ թուին։ Ասողիկ Բ. Գ, 133 ՄԼԳ թուին,

դատի¹ հետ, որ Մամիկոնեանց բնագաւառ Տայքի տէրն էր:

Ս. Պ. 1885), իսկ նոցա եզրայր սերացող Մեհրուժանն սպանուեցաւ Վաստուրականում այս Գաւթի ձեռքով, որին երեք եզրայրներով յանձնել էին իրենց երկիրը (Չամչեան Բ. 419—420):

Բուղայի հրամանով 852 թուին բռնուում են Աշոտ և Գաւթի, Տարօնի տէր Բագարատ Բագրատունու որդիքը, և իրենց հարազատների հետ ամիրապետին ուղարկուում (Յովհ. կաթող. էջ 67): Հաւանօրէն այս Բագրատ Բագրատունու որդիքն են թ. դարի վերջերում սպրոդ Տարօնի իշխան Կորապաղատը և իւր եզրայր Գաւթի, որ Գերանիկի փեսան էր, և սորա օգնութեամբ ևս Գաւթի Տարօնի տէր է դառնում, եօթ տարի իշխում և կոչուում է նոյն իսկ «արքայ» (Թովմայ Արժրունի Գ. ԺԹ—Ի, 217—220. Ս. Պ. 1887):—

Ազգային վէպն էլ ունի երկու Մհեր Առիւծաձև և Պզտիկ և երկու կամ երեք Գաւթի, թլօր Գաւթի և թուրան Գաւթի (Մ. Արեգ. 13, 11, 60. Գ. Սար. 33): Թլօր այսինքն թլուատ վէպի բանաստեղծական ու գեղարուեստական մեղմ արտայայտութիւնն է մահմեդականութեան անլուր խժոժութեանց, որ սարսափահար կարգում ենք Ղևանդի, թ. Արժրունու և Յովհ. կաթողիկոսի պատմագրութեանց մէջ:—

Հայ տիկիներն էլ տարուել են Սամառայ, ինչպէս Հրանոյ Արժրունի տիկինը (Թովմ. Արժր. Գ. դ, 139), իսկ Տիփսիսի քաղաքապետ Իսմայէլոցի Սահակի գեղեցիկ ամուսինը, վրացի կամ հայ, ամիրապետի կինն է դառնում (թ. Արժր. Գ, թ, 174—175): Արեւմն հասկանալի պիտի լինի, թէ ինչու Գաւթի մայրը Մարամելի այսինքն Սուսուրայ մելիքի կինն է (Մ. Արեգ. 11):

1 Գաւթի Կիւրապաղատը բոտ Ասողիկի (Ատեփանոսի Տարօնեցոյ Ասողկան պատմութիւն տիեզերական Ս. Պ. 1885, Գ. զը—խ, 266—269) պատերազմում է Բասն կամ Բատ Ապահունեաց և Նրփրկերտի ամիրայի յաջորդ քեոսրդիներէր քուրդ Մրուանեանց դէմ, խլում է նոցանից Մանազկերտը հայոց և վրաց թագաւորներէր օգնութեամբ, յետոյ էլ պաշարում է Խլարը, բայց չէ կարողանում նուաճել Ըստ Սաէնլի Լէն-Պուլի այս Մրուանեանց պատկանում էր Կիարբեքի երկիրը իւր Ամիդ, Արդան, Մայնարկին [—Նիփրկերտ] և Կայֆա քաղաքներով 990—1096 թուականը: Բատի յաջորդներից մինը, Աբու Մանսուրը, հնազանդեց Փատմեանց և Հալէպի փոխարքայ նշանակուեցաւ: (Սա. Լէն-Պուլ Мусул. Династія, § 47, էջ 96): Ապա Կիարբեքի տէր դարձան Օրտուկեանք, որոնց մի ճիւղը Կայֆայում իշխեց 1101—1231, և Մարդինում 1108—1312. Շահի-

Իզուր չէ Սասունցի Գաւիթ դիւցազներգութիւնը կապուել Մհերի զրոյցի հետ. Մհերը նոյնպէս սրտամական

սրմէններն Օրաուկեաններից խրեցին Խլաքը և իշխեցին 1100—1207. Ջենգի ամիրայի ցեղը տիրեց Ասորիքին և Միջագետքին 1127—1250, և Մուսուլում նստան 1127—1234. (Ստ. Լէն-Պուլ § 64. էջ 140—142. § 65, էջ 143. § 62, էջ 136—138): Հայ ժողովրդի զրոյցներում, Սասունցի Գաւիթ վէպի մէջ, ինքնըստինքեան արաբացոյց հետ խառնուեցան ու միացան այնուհետև մեր երկրի հարաւում հեռզհետէ տիրող թէև ոչ արաբացի, բայց մահմդական ցեղերն ու հարաւութիւնները:

Արդ այս բոլոր անջքերը և անձերն անդրադարձել են վէպի մէջ. Վէպի «քաւոր Գորգի» (Գար. Սար. 43) կամ Գորգիկ՝ (Սրուանձտեան—Պատկան. է, 19) վրաց թագաւոր Գորգի կամ Գէորգէն է (Չամչեան Բ, 883) կան համանուն և ալ թագաւորներ: Համալու զոնապանը (Մ. Արեղ. ժ. Գ. էջ 38: Բ. Խալաթ. 45) վրաց Ռուզուդան թագուհու զեսպան Համալուրա իշխանը (Կիրակոս Փանձակեցի ԼԸ, 161. Վենետիկ 1855): Մորամելիք կամ Մալամելիք—Մուսուլայ մելիք. որի դէմ կռուում է Գաւիթը: Գաւիթը կռուում է և Մալամելիքի հարկապահանջների դէմ, որ են Բաղին (Գ. Սար. 99—100 են.) և Կուզրաղին (Մ. Արեղ. 17, 18—19: Գ. Սար. 32—33, 39 են), կամ Կուզրաղին (Գ. Սար. 99—100 են) կամ Ղոզբաղին (Գ. Սար. 32, 38 են) կամ Խոզբաղին (Գ. Սար. 32, 52 են), Սիւղին և Չարխաղին (Գ. Սար. 99—100): Արդ Սաէնլի Լէն-Պուլի մահմեդական հարստութեանց վերոյիշեալ Գիարբեքիւրի Մրուանեանց, Ջէնգիի տոհմի՝ Մուսուլի աթարեզների, Կիարբեքիւրի Օրաուկեանց և Խլաթի Շահ-արմէնների ցանկերի մէջ գտնում ենք նախ Բազ անունը, որ ունի և Ասողիկը, ինչպէս տեսանք: Ապա կան մի քանի Կուզբաղիին և Սէյթ-աղ-ղին և մի Չախիւր-աղ-ղին, որ վէպի Բաղին, Կուզբաղին Սիւղին և Չարխաղին անուններն են: Հմմ. և M. J. Saint-Martin Mémoires hist. et géorg. sur l'Arménie I. էջ 377. 425—435 Paris 1818:

Թէ ինչպէս անունները կարող են փոփոխուել նոյն իսկ ժամանակակիցների բերանում, բուռական է ապեք որ Արու-Մանսուր անունը Ասողիկի մէջ Ապու-Մասար է դարձել Առաւել ևս դարերի ընթացքում, բերանէ բերան անցնելով, մանաւանդ թշնամու արհամարհելի անունները կը փոխուէին, ուստի Կուզբաղին, Խոզբաղին ձևերը Յայտնի է որ զերմանացոյց ազգային դիւցազներգութեան Նիրբելունգների Գիարիս Բեռնցին, Խաալիայ տիրող Օսագոթների թագաւոր Թէոդորիս Մեծն է, որ Վերոնոյում էր նստում, իսկ Խոցելը Հոնների

անձն է երևում և Մամիկոնեան, գէթ Մեհեր¹ անունով մէկը մեզ յայտնում է իբրև քաջայր։ Սակայն ժողովրդական վէպի Մհերի վախճանը յիշեցնում է, ինչպէս տարիներ առաջ Արձադանք լրագրում առիթ ենք ունեցել ասելու, մեր Արտաշէս Բ. որդի Արտաւազդինը, ինչպէս և Մհերի մեռած հօր Դաւթի անէծքը Արտաշէսինը (Մ. Արեղեան Դաւթի և Մհեր էջ 51), ուստի և կարծում ենք Մամիկոնեանց ծագումը կապ ունի Արշակունեաց հետ ինչպէս և դալուստը, որ տեղի ունեցած պիտի լինի Վաղարշակի և կամ Տրդատ Ա. -ի, այն է Խորենացու Արտաշէս Բ. -ի ժամանակ, եթէ միայն ասելի հին շեն Մամիկոնեանք, ինչպէս և իրենց պաշտօնը։ —

Այսպիսով արեմն թէ ժողովրդական դիւցազներգութեան, թէ Փ. Բուզանդի և Մեսրոպ Երէցի և թէ Յովհան Մամիկոնեանի պատմագրութեան շնորհիւ մենք ունինք մեր առաջ ոչ միայն Մամիկոնեանց պատմութիւնը, այլև զրոյցները, որոնց մասին յիշում է Խորենացին²։ Յաւալի կը լինէր Զենոր Գլակի յիշատակած Մամիկոնեան իշխանների գլքի³ կորուստը, եթէ այդ գիրը չլինէր Յովհան Մամիկոնեանի «Պատմութիւն Տարօնոյ» գրուածքը, կամ գոնեա այդ պակասը չլրանար հենց Յ. Մամիկոնեանի՝

Ստաիրլան է։ Պատմութեան և վէպի տեղադրական անուններն քոլորովին նման լինելով՝ ասելորդ ենք համարում յիշել և համեմատել։

1 Չորտուանէլ Մամիկոնեանը ՇՄԳ. (=1104) թուին մի դասակերտ իւր սահմաններով կտակում է Տարօնի Առաքելոց Վաղարի վանքին. «Այս մեր բարձր հրամանաց է գիր... իշխանի Տարօնոյ և ամենայն Հայոց Չորտուանէլի որդոյ Տաճատայ քաջի Մամիկոնայ... ետու գա... ի յիշատակ ինձ և... Տաճատա և մօրն իմոյ Զարմանգըլտայ և նախնեաց իմոց քաջ արանցն Վեսենա և Մեհերա, որք յառաջ քան զմեզ տիրէին այսմ աշխարհիս... ևն» (Հայաստանում, Վենետիկ 1901, Թ.—294, էջ 396—397)։

2 «Այժմ առ մեզ դատնին անբաւ գրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեփական ազատութեանն պայագատութիւնն». Խոր. Ա. գ, էջ 7. Վենետիկ 1865.—

3 «Քանզի՞ Քաւանք են սորքա մեծամեծք, որպէս կայ ի գրի իշխանացն Մամիկոնեանից»։ Զենոր, էջ 37. Վենետիկ 1889։

և Ջենոր Գլակին վերագրուած Տարօնի պատմութեամբս
 Հ. Գար. Զարպանալեանը յիշում է «Պատմութիւն ազգին
 Մամիկոնէից ցտորըն Վարդան¹», յարելով թէ այդ գտնուում
 է Արղնի Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքի մատե-
 նադարանում «թիւ գրչ. 112»: Սակայն այս նոր հեղինակ
 չէ, այլ Մեսրոպ Երէցը, ինչպէս երևում է հեղինակի յի-
 շատակագրութիւնից, որ գրքի վերնագիրը կարելի է համա-
 րել², այլ և այն հանգամանքից, որ Մեսրոպ Երէցն իրօք
 իւր պատմութեան թելը հասցնում է մինչև Ս. Վարդան:

Մամիկոնեանք ապրում են ու գործում մեր պատ-
 մութեան պարթևական ու պարսկական և արաբական ու
 սելջուկեան դարաշրջաններում. ինչպէս այդ երևում է
 թէ ազգային պատմութիւնից և թէ դիւցազներգութիւ-
 նից³ եւ ահա այժմ հարկաւոր է իմանալ այս դիւցազ-

1 Հայկ. Հին Գպրութեան պատմութիւն Վենետիկ գ. տպգ.
 1897, էջ 789. բ. տպգ. էջ 760:

2 Սովորք Զ. էջ 138 «... եւ Մեսրոպ... ծաղկաբաղ արարի
 զգիրքս... և զառաքինութիւն... հայրապետաց տոհմի Ս. Գրիգորի...
 և զտեսիլ և զկտակ Ս. Ներսեսի, և զհաջութիւն և զյաղրութիւն
 արիական ազգին Մամիկոնեից...» Ար գրքի վերնադրերը տարբեր
 են յիշում համեմատիւ հենց նոյն Մեսրոպի երկու վերնագիրը
 Սուվորք էջ 3 և 9: Տարիներ առաջ դիմեցի Ամենապատիւ Օրմանեան
 Պատրիարքին և այդ ձևագրի մասին տեղեկութիւն խնդրեցի. սակայն
 պատասխան ստացայ, որ ծանօթ անցքերու կամ ինչպէս ասում էին
 տաճկահայոց թերթերը վերջին անտեսական տաճկապետների այն է
 տաճկահայոց կոտորածների ժամանակ կորել այնպատացի է:

3 Վերևում և ծանօթութեանց մէջ մենք տեսանք, թէ ինչպէս
 արաբական և սելջուկեան շրջանի մեր պատմական անցքերն անդրա-
 դարձել են ազգային վէպի մէջ: Օսմանեան և նորագոյն պարսկական
 շրջանի ազդեցութիւնը լոկ տերմիններ են և լեզուական, որ գրա-
 կան խնդիր է: Բայց վէպը կազմակերպւում, ամբողջանում է և
 ամփոփւում մինչև Փն. դարը. որ երևում է ոչ միմիայն Մամիկոն-
 եանց իսպառ վերջանալով, այլև վէպի օտար անուններից: Ահաւասիկ
 «Շքերդան կորասական, Հրմզայ Լօռայ փանլէվընիք», «Խրյ, Շքեր-
 դան, կորասական, Լօռայ Հրմզայ փանլէվներու զլոլան կս բերէ»
 (Սրուանձտեան-Պատկանեան 19, 21). «Լօռուայ Համզայ». Լօռայ

նական տոհմի պատմութիւնը, նորա կալուածքները, պաշտօնը, ծաղոււմը, բարդաւածումը, նուազումը և վախճանը, ուրեմն նորա ամբողջ գործունէութիւնը:

Համզին Շապգոնց Խորասանու գլուխը». «ԼՕՈՒՐԱՅ Շարի-արքան» (Պար. Սար. 45, 46, 48, 57):

Մեզ թուում է այդ անունները, բացի մէկից՝ երկրների անուններ են, որոնցով կոչուում են փահլեանները, Խրյ—Խոյ. Շրրբգան կամ Շապգոնք կամ Շարի-արքան Ֆարսի մաս Շեբանկիարանն է (Ստ. Լէն-Պուլ, 298), Խորասան—Խորասական (Saint—Martin II, 207): ԼՕՈՒՐՆ կարող է լինել մեր ԼՕՈՒՐ գաւառը (հմտ. վերև Գոնդի արձանագրութիւնները և ծանօթութիւնը, այդ Գոր. Սար. 46, ծանօթութիւն 3): Այս երևում է և անցքերի բնթացքից. — Իսելթ ԼՕՈՒՐ և Կաղզուանից Սասուն վերադառնալիս Խլաթցոյ դէմ կռուում է (Սրուանձ. Պատկան. Ը, 23): Ի. Խալաթեանցը բացատրելով, որ Կաղզուան—ուչուլ, յարում է «պարզ է, որ Կաղզուան և Կաղզուան բառերը բացի հնչիւնների նմանութիւնից ոչ մի կողմ չունին ...» (էջ 44) հակառակ Մ. Աբեղեանի «Կաղզուան՝ զուտան թէ Կաղզուանցի» (էջ 37) ծանօթութեան, որ մասնացոյց է անում Գ. Սրուանձտեանի հրատարակութիւնը և և իրօք «Կաղզուանու ամիրին աղջիկ մի կայ անուն Խանդուգ» (Սրուանձտ.—Պատ. Ա, դ, 17) խօսքը տարակոյս չէ թողնում: Միւս կողմից Կաղզուանը Կամսարականների երկրումն է, իսկ Մամիկոնեանց և սոցա խնամութիւնը յայտնի է Ս. դարից (Կ. Կոստանեան Հիւսուածք Գ. է, § 8, էջ 94—96): Խանդութի հայրենիքը Կաղզուակոյ կամ Բերդ Կապստին (Գ. Սար. 40, 42) կարող է լինել Նրասխանդի, ուրեմն Կամսարականների, Կապոյա բերդը, որին տիրում էր Հմայեակի որդի Գրիգորը (Ինճիճեան Ստորագ. Հին Հայաստանի էջ 398), ըստ այսմ Խանդութը կարող էր ծագմամբ Մամիկոնեան և լինել Ռուսաց հինգ վերասանոց քարտեզում Կաղզուանից հարաւ արևելք Թեհրուրակ լեռից հիւսիս արևմուտք և Ալդաշ լեռից ստիւալ ինչ հիւսիս գտնում ենք Թեհրուր-Տաւ լեռը, որտեղ մենք տեսնում ենք Խանդուտ անունը: Այլևս տարակոյս չէ մնում երբ Ալիշանը Կաղզուանի մասին խօսելով ասում է «Յարևմտակողմն զիւճակին է Խանդուտի ձորն, գետակաւն՝ որ թուի կրանել ի Չուգուրչամ լճակէ փոքուէ: Գրեղն Խանդուտ մերձ է ի խաւնուրդս նորին յԵրասխ. հանդէպ Շամի դեղջ Կեչուանայ. յիշի և բերդ նորին, և ամենայնն, ըստ աւանդութեան, յանուն դատեր թագաւորի միոյ Հայոց աստ բնակեցելոյ, զորմէ հանդոյն դիպաց Տիգրանուհոյ զիւլէին ծերունիք կողմանցն» (Այրարատ. § 39, էջ 49, Վեհեակի 1890), Հմտ. Ս. Հայկունի Բագրեանոյ մասն Ա. Ի. Կապոյա Բերդ. էջ 338, 342. Ս. Էջմիածին

1894: Բայց Կապուակոզ անունը մեզ յիշեցնում է և Ռշաունեաց Ընձաքիտարս լեռը, որ կոչուել է Կապուակոզ, «Յայս անուն կոչի մինչև ցայժմ Կապուակոզ» (Ինճիճ. Հին-Հայաստ. 166): Այսպիսով Լօրն-էլ ուրիշ անոց ևս պէտք է փնտռել: Ի նկատի պէտք է առնել, որ վերոյիշեալ բոլոր փոհիււաններն այլազգի են և Սասունից հարաւ և արեւելք դանձա՞ծ երկրներէց. ինչպէս և հետեւեալ փոհիււանները. «Սասուն սոցրիկ չիկէր, որ դու էկար Կապուակոզ, ... գինաս էղի Պիրաբաճի է, Խոզբաճի է, Մարայ Մելիքն է, Հնդայ ամիրէն է, Բազըղու խալիֆէն» (Ք. Սար. 47), Պէտք է կարծել որ Լօրին այժմեան Լուրիսանն է: Այս երևում է մասամբ և Բ. Խալաթեանի «Լիււսոյ դաշտ» (Սասնայ Փահիււաններ կամ Թըլօր-Դաւիթ և Մհեր, Վաղարշապատ 1899, էջ 23, 33, 39) անուան տակ դրած ծանօթութեամբ «Չատիկի տակով Մուրայ և Սասունի մէջտեղն է»: Իսկ Լօրայ Համգան Ակ-Պոյիւնի թուրքմէններից է, որոնք թուրքմէն Կարա-Պոյիւնիների սեղը բռնեցին 1378—1502 թուականը նուանելով Ատրպատականն ու Իրարբէրը. Կարա-Իւլուկ Օսմանի որդի այս Համգան իշխում էր 1406—1444 (Ստ. Լէն-Պուլ, էջ 215, 302): Ըստ Չամչեանի Համգայ ամիրոյ Միջազեարի՝ որդի Օրմանայ իշխում է Մերկինում (Ք. 461) և Ամրդում (Ք. 468, 483): Սակայն Լուրի և Լոուր, Կապու և Կապուակոզ անունները սոսկ հմանութեանց չփոթութիւնից կամ տեղական հանգամանքներից չէ առաջացել, այլ և պատմական անցքերի անդրադարձումից:


Մի քանի խօսք ևս գէպի նիւթի սկզբնաւորութեան մասին: Ակուում է համարեա հայերի Հայաստան գալուց: Ատորոց Սենեքերիմ թագաւորի Արքամելիք կամ Արդամոզան և Սանասար Սկայորդու ժամանակ իւրեանց հօրն սպանելով փախչում են Հայաստան, սոցանից ծագում են Արծրունիք և Գնունիք: Արծրունի Շարաշանին Վաղարշակը հաստատում է «բզեչխ մեծ և կուտակալ» Ատրիեստանի սահմանների ժօա՝ Տիրքիտ ամիրն պարգևերով նորան գուտառներ, Արճն իւր շրջակայքով, Տաւրոս լեռը, որտեղ Արմն է և ամբողջ Կղիտուրը (Խորենացի Պատմ. Ա, իգ, 48—49, Ք. ծե 250 և Բ, ը, 80 Վենետիկ 1865): Այս է և մեր դիւցազներիգութեան բոլոր հրատարակութեանց սկզբի մասը. անուններն անգամ նոյն են, որ զանց ենք անում յիշել իբրև ծանօթ:—Մամիկոնեանք, որ Տայեցի են, յետոյ դ. դարում են հաստատուել Տարօնում և Սասունում: Սոցա Արծրունեաց հետ ունեցած ազգակցութեան կամ խնամութեան մասին Գ. դարուց վկայում է Փ. Բուզանդ (Ք. ժԸ, 47) և Ն. դարում Ղ. Փարպեցի (Հմմ. Ա, Կոստանեան Հիւսուածք Գ, է, 94—96) և Ռշաունիների հետ (Բուզանդ Գ, ժը, 47. Պ, ծթ, 183. Յ, լէ, 250): Այստեղից և Սերէտի պատմագրութիւն»

նից կարելի է հետևեցնել, որ վէպի անդադար քաղաքէ քաղաք, երկրէ երկիր շրջող Թեաթորոսը, Առիւծաձև Մհերի աները, (Գ. Սար. 22—23) Թէոդորոս Ռշտունին է, որի անուան նմանութիւնն ևս ակնհերե է: Սասնայ ծուերից մնացեալները, որոնք պատմական անձեր են դժուարանում ենք առայժմ որոշել, յետոյ առիթ կունենանք թերևս աւելի խօսելու. նկատենք միայն Խոր-Գուսանը (Սրուանձաւ.—Պատկան, Գ. 7. Ը, 24) յիշեցնում է մեզ Նիրեկունգների Փուկէր Ալցէյցի երգիչը:—Այս բոլորից պարզ երևում է որ վէպի միջուկը կենտրոնը կազմում է արարական և թուրք—թաթարական կամ մահմեդականութեան շրջանը:

ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ

11 Մարտի. 1906

Վաղարշապատում.



ԶԷՄՍ*)

ԺԱՄԱՆԱԿԻ ԶԳԱՅՈՒԹԻՒՆԸ

1. Ներկայի զգայութիւնը որոշ տեւողութիւն ունի: Փորձ արէք, էլ չե՛մ ասի նկատել, այլ նշմարել և հետամտել ժամանակի ներկայ վարկեանը: Այդպիսի փորձը կատարելապէս ապարդիւն կանցնի: Ո՞ւր է այդ ներկայ ասածդ: Անհետացել—չքացել է նախ քան մեր ըմբռնել կարողանալը, փոխանցել յաջորդող վարկեանին: Հօջսոնի վկայութիւն բերած բանաստեղծը ասում է Վյն ակնթարթը, երբ ես խօսում եմ, արդէն հեռու է ինձանից»:

Եւ իրօք, ներկան, բառիս բուն առմամբ, մարդ ըմբռնել կարող է միմիայն իբրև մի մաս կենդանի շարժուն, մի մաս օրգանիկ պրօցեսով լեցուն՝ աւելի ընդարձակ մի ժա-

*) Уильямъ Джемсъ. Психологія, переводъ съ англійскаго Лапшина. Глава XVII. Чувство времени. (աչքի առաջ է ունեցուել նոյն գրքի ուստիւրէն նաև միւս թարգմանութիւնը—подъ редакц. Оболенскаго «Научныя основы психологія»).